

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ 18-ՐԴ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ամեն տարեդարձային օր՝ Հայաստան աշխարհի անկախության երկնու մը հպարտութեամբ, հրնուամեով եւ յաւատեսութեամբ կը գեղու ամեն հայու սիրտը: Հպարտ է հայը, որ ի վերջոյ վերականգնեց իր հայրենիքի անկախութիւնը: Կը հրնուի հայրենիքի սէրը սրտին հայրողին, կ'ունենայ յաւատեսութիւն, որ կը կամրջուի իր ազգային դարաւոր երազներուն իրականացման հետ: Նոյն այդ սրտին մէջ սակայն, լուռ, դարանակալ՝ միացող կսկիծ մը մեղմաբար կը խանձէ այդ հոգեպարար գգայնութիւնները, կասկած արթնցնելով իր հայրենիքի ապագայի կապակցութեամբ:

Միացող կսկիծը հետեւանքէր հայրենի անկախութեանը ստացումը: Անկախութիւնը չի բերաւ այն ինչ դարերը շարունակած զրացուած էր իրեն, այն, որուն կարօտ էր մնացած միշտ:

Ան ննչուած էր անցեալին, մնաց ննչուած իր կերտած անկախ հայրենիքէն ներս: Հայածուած էր օտարի կրունկին տակ, մնաց հայածուած իր անկախացած հայրենիքի իշխանաւորներու կողմէ: Երէկ, անիրաւուած էր բռնագրաւիչին կողմէ՝ մնաց անիրաւուած հայագրի իշխանաւորներու կողմէ: Հայածուած էր իր երկիրը երէկ՝ մնաց հայածուած այսօր եւս, այնքան երազուած անկախ հայրենիքի մէջ: Բռնատիրութիւն էր օտար լուծի տակ, բռնատիրութիւն մնաց անկախ հայրենիքէն ներս:

Այո՛ յոստախարութիւնը դարձաւ իսանձող կսկիծ: Կարելի չէ այսպէս ապագայ կերտել: Հակառակ դրամար սկզբունքներով կարելի չէ երկիր բարգաւանեցնել: Կարելի չէ սուտերով ու կեղծիքներով, անօրինութիւններով ու ապօրինութիւններով երկրին տալ օրինական կառոյց, օրինակելի ազգային դիմագիծ, օրինակելի վարչակարգ: Ընդհակառակը, անոնք պատճառ կը դառնան նոր յոստախարութիւններու, որոնք պատճառ կը դառնան մեր հողի գոյութեան սպառնացող անդամանելի նգնաժամեր:

Շաբ.ը էջ 19

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԿՈՂՄՆԱՎԿԻՑՆԵՐԸ ԽՍԱՑՈՒՑԻՆ ԻՐԵՆՑ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Հայ Ազգային Գոնկրէսը հանդէս եկաւ նոր յայտարարութեամբ մը, որու մէջ, այլ հարցերու շարքին հանգամանօրէն անդրադարձած է նաեւ հայ-թուրքական յարաբերութիւններուն: «Սեպտեմբերի 18-ին տեղի է ունենալու Հայ Ազգային Գոնկրէսի կազմակերպած հանրահաւաքը: Այն ազդարարելու է բնապետութեան դէմ մղուող համաժողովրդական պայքարի նոր ալիքի սկիզբը, այնպիսի ժամանակաշրջանում, որ կարող է բարստորոշ նշանակութիւն ունենալ հայ ժողովրդի եւ պետութեան համար: Երկրում իշխանութիւնը բռնազաւթած ռեժիմը օրէցօր ցուցադրում է իր տարրական անկարողութիւնը եւ ոչ-կոմպետենտութիւնը պետական կառավարման բոլոր կենսական բնագաւառներում», - ըսուած է յայտարարութեան մէջ:

ՀԱԳ-ի կարծիքով անմխիթար վիճակ կը տիրէ նաեւ արտաքին քաղաքականութեան բնագաւառին ներս: «Վերջերս հրապարակուած հայ-թուրքական արձանագրութիւնները բացայայտեցին

այս բնագաւառում ռեժիմի վարած քաղաքականութեան սնանկութիւնը: Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման եւ սահմանի բացման մասին հաւաստիացումները այդ արձանագրութիւններում արժեզրկուած են թուրքիայի կողմից պարտադրուած անընդունելի դրոյթների ընդգրկումով, ինչն ապացուցում է, որ Հայաստանը ընդունել է թուրքիայի նախապայմանները:

«Այնչափ է, թէ ինչ է շահուած թուրքիան պատմական հարցերի միջկառավարական յանձնաժողովի հաստատումով: Պատմական փաստերի շուրջ հայ-թուրքական երկխօսութեան հաստատման պատճառաբանութեամբ այսուհետեւ կը դադարեցուի Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը, թուրք-ամերիկեան յարաբերութիւններում հարթուած է լարուածութիւն առաջացող կիսմիտումներ: Հայաստանը սակայն, Հայոց Յեղասպանութեան ուրացման անընդունելի դրոյթները կը շարունակէ:

Շաբ.ը էջ 4

ԹՐԲԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԿԱԱԾ Է ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵՏ

Օգոստոս 31-ին հրապարակուած Հայ-թուրքական Արձանագրութիւններուն կապակցութեամբ, թուրքիոյ մէջ տեղի կ'ունենան լայն քննարկումներ, որոնց կը մասնակցին նաեւ ընդդիմադիր կուսակցութիւնները:

«Ընդդիմութեան տեսակէտները կը տարբերին իշխանութեան դիրքորոշումէն, ինչ որ բնական է», - Երեքշաբթի, Սեպտեմբեր 15-ին յայտարարած է Արտաքին Գործոց նախարար Ահմետ Դավութօղլու, որ քննարկումներու շարք մը նախաձեռնած է թուրքիոյ ընդդիմադիր կուսակցութիւններուն հետ:

CNN-Turk հեռուստեսիւի հաղորդմամբ, Դավութօղլուի հետ հանդիպումէն ետք «Բարգաւաճում» կուսակցութեան առաջնորդ Նուսրէթ Գուրուրը, ընդգծած է, որ Հայաստանի հետ սահմանի բացումը ճիշդ պիտի չըլլայ, «քանի դեռ չեն ազատագրուած Ատրպէյճանի գրաւեալ տարածքները»:

«Եթէ թուրքիան սխալ քայլեր կատարէ հայկական հարցով, ի յայտ կու գան ինդիւրներ Ատրպէյճանի հետ, ինչպէս նաեւ յօդս կը



Ահմետ Դավութօղլու

ցնդի այն մարտավարութիւնը, որը Անքարան կը փորձէ իրականացնել կովկասի մէջ», - յայտարարած է ընդդիմադիր կուսակցութեան առաջնորդը, աւելցնելով. - «Այդ պարագային թուրքիան կը կորսնցնէ իր հանդէպ վստահութիւնը ոչ միայն տարածաշրջանին ներս, այլեւ բոլոր թրքական հանրապետութիւններուն մօտ»:

Թրքական Hurriyet-ի փոխանցմամբ, անդրդուելի եղած է նաեւ

Շաբ.ը էջ 4

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԻ

Լոս Անճելըսի հայութիւնը կը շարունակէ մօտէն հետաքրքրուելի հայ-թուրքական յարաբերութիւններու գծով տեղի ունեցող զարգացումներուն: Համայնքէն ներս կը տիրէ ընդհանուր մտահոգութիւն վերջերս հրապարակուած միջպետական երկու արձանագրութիւն կապակցութեամբ:

Ի տարբերութիւն Հայաստանի զանգուածային լրատուամիջոցներուն, ուր կը ներկայացուին միակողմանի կարծիքներ, Լոս Անճելըսի մէջ գործող հայկական հեռուստեսիւի ալիքներու վրայ տեղի կ'ունենան քննարկումներ ու բանավէճեր՝ տարբեր մօտեցումներ արտայայտելով Հայաստանի եւ թուրքիոյ միջեւ նախաստորագրուած փաստաթուղթերուն շուրջ:

Կիրակի, Սեպտեմբեր 13-ին AMGA հեռուստեսիւի ալիքի վրայ տեղի ունեցաւ բանավէճ՝ նախաձեռնութեամբ Միացեալ Հայ Երիտասարդներ կազմակերպութեան: Բանավէճին մասնակցեցան աւանդական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներ, անկախ լրագրողներ եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Բոլոր մասնակցիները գրեթէ միակարծիք էին, որ այս Արձանագրութիւնները հայաստապատ չեն կրնար ըլլալ եւ պէտք չէ արժանանան վաւերացումի: Միակ կազմակերպութիւնը որ կը պաշտպանէր հակառակ տեսակէտ, Հայկական Համագումարի ներկայացուցիչն էր, որ կը փորձեր դրական կողմեր գտնել փաստաթուղթերուն մէջ:

Միւս կողմէ, Լոս Անճելըսահայութիւնը կը պատրաստուի բողոքի ցույցի, որ ծրագրուած է Կիրակի, Սեպտեմբեր 27-ի երեկոյեան ժամը 5-ին, Կլէնտլի Փելանքոլի Փարքին մէջ, կազմակերպութեամբ՝ Ս.Գ. Հնչակեան Կուսակցութեան, Հ.Յ. Դաշնակցութեան, Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Միացեալ Հայ Երիտասարդներու:

Ժողովրդային հաւաքը կը նախատեսուի ըլլալ սփիւռքի տարածքին տեղի ունեցող բողոքի միջոցառումներուն մէջ ամենէն բազմամարդը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 20, 2009

VERDUGO PARK - ԿԼԵՆՏԷՅԼ

FREE ADMISSION
 UMSRC ԱՅՏԻ

ՏԵՍԱԿԵՏ

ՕՐՈՒԱՅ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸԵՏ

ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
19-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Գ. ԽՈՏԱՆՆԵԱՆ

Կուսակցություններու կեանքին մէջ համագումարները կը հանդիսանան այն կարեւոր հանգրուանները երբ տարբեր տեղերէ եկած պատգամաւորներ, կը համախմբուին կատարելու համար անցեալ շրջանի գործունէութեան արժեւորումը եւ ապագայի ծրագրաւորումը: Համագումարները նաեւ կոչուած են ժողովրդային լայն գանգուածներուն փոխանցելու քաղաքական կազմակերպութեան մը դիրքորոշումները ու ծրագիրները՝ հասարակութիւնը յուզող հարցերու շուրջ, ըլլան անոնք քաղաքական, տնտեսական թէ ընկերային:

Այս օրերուն Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը կը գտնուի իր համագումարի նախաշեմին: Սեպտեմբեր 26-ին, աշխարհի բոլոր հայաշատ քաղաքներուն մէջ գործող Կուսակցութեան մասնաճիւղերը ներկայացնող պատգամաւորներ պիտի գան համախմբուելու քաղաքամայր Երեւանի մէջ, պաշտօնական հանդիսութեամբ մը կատարելու թիւով 19-րդ համագումարի բացումը, որուն պիտի յաջորդեն փակ քննարկումներ:

122-ամեայ իր պատմութեան ընթացքին, Հայաստանի մէջ տիրող քաղաքական անբարենպաստ պայմաններուն բերումով եւ կամ արգիլուած կուսակցութիւն ըլլալու պատճառաւ, Հնչակեան Կուսակցութիւնը չէր կարողացած իր գերագոյն ժողովները գումարել իր պատկանած մայր հողին վրայ, որու ազատագրութեան ու անկախութեան համար տուած էր հազարաւոր նահատակներ:

Տասնամեակներ թափառելէ ետք տարբեր մայրաքաղաքներու մէջ, 1995 թուականին կարելի եղած էր առաջին անգամ Կուսակցութեան համագումարը կայացնել Երեւանի մէջ: Այդ համագումարէն պատգամաւորները բաժնուեցան այն համոզումով, որ Հայրենիքի դռները այսուհետեւ բաց են ու կարիք չկայ օտար ասիերու վրայ ժողովներ գումարելու:

Սակայն, կարճ ժամանակ ետք, Հայաստանի մէջ տեղի ունեցաւ իշխանափոխութիւն, որուն յաջորդեց Հոկտեմբեր 27-ը, բազմաթիւ քաղաքական սպանութիւններ, ընդդիմադիր կուսակցութիւններու հալածանք, ձերբակալութիւններ, ժողովուրդի մօտ տիրեց վախի մթնոլորտ, գանգուածային լրատուամիջոցները առնուեցան իշխանութիւններու ամբողջական վերահսկողութեան տակ ու կամայականօք երկրէն ներս հաստատուեցաւ կիսաբռնապետական վարչակարգ մը:

Այս պայմաններուն տակ, անգամ մը եւս Հնչակեան Կուսակցութեան առջեւ փակուեցան Հայաստանի դռները ու յաջորդող երկու համագումարները տեղի ունեցան օտարութեան մէջ:

Թէեւ Հայաստանի մէջ տիրող քաղաքական մթնոլորտը կը շարունակէ մնալ ապառոջ, սա-

կայն Հնչակեան Կուսակցութիւնը վճռակամ է, այս անգամ ամէն գնով համախմբուելու Հայրենիքի մէջ եւ եթէ իր առջեւ ըլլան խոչընդոտներ, յաղթահարել գանձնով ամէն գնով:

Օրակարգի վրայ պիտի դրուին ու համապարփակ քննարկումի պիտի արժանանան Կուսակցութեան կառուցները առաւել աշխույժացնելու եւ հզօրացնելու միջոցները: Հայաստանի մէջ Կուսակցութեան տեղի եւ առաքելութեան ճշդումը պիտի դառնայ կարեւորագոյն նիւթ՝ որ պէս համամարդկային սկզբունքներու դաւանող եւ ընկերային արդարութեան ձգտող քաղաքական կազմակերպութիւն:

Սակայն, վերջին շրջանին տեղի ունեցող զարգացումները պիտի գան Կուսակցութեան ներքին կազմակերպչական հարցերը որոշ չափով դարձնելու երկրորդական: Այս համագումարի օրակարգի հիմնական նիւթերը պիտի ըլլան հայ-թրքական յարաբերութիւններու եւ արցախեան հարցի գծով տեղի ունեցող տեղաշարժերը, որոնք խռովայոյզ վիճակի մը մատնած են հայութիւնը ամէնուրեք:

Օգոստոս 31-ին հրապարակուած երկու Արձանագրութիւնները աւելի հրատապ դարձուցին տեղի ունենալիք քննարկումները, որոնց շուրջ միակարծիք է Հայաստանի եւ արտասահմանի հնչակեանութիւնը: Կասկած չկայ որ, Համագումարը իր եզրափակիչ յայտարարութեամբ ոչ միայն պիտի գայ անգամ մը եւս իր մտահոգութիւնները յայտնելու, մերժելու եւ դատապարտելու հայ-թրքական համաձայնութիւնները, այլ նաեւ պիտի մշակէ գանձնաձախողութեան մատնելու իր ծրագիրները:

Լուրջ հանգրուանի մը առջեւ գտնուելով ու գիտակցելով Հայ ժողովուրդի դիմագրաւած մարտահրէժներու լրջութիւնը, ազգով մտահոգ բոլոր կազմակերպութիւնները համախմբուած գործելու պարտաւորութեան առջեւ կը գտնուին: Այս առումով Հնչակեան Կուսակցութիւնը պիտի չվարանի՝ գործակցութեան ձեռք երկարելու բոլորին:

Մնալով հանդերձ ընդդիմադիր կուսակցութիւն, Հայաստանի գործող իշխանութիւններուն հետ համագործակցութիւնը եւս բացառուած չէ, պայմանաւոր երկրէն ներս իրականան որոշ բարեփոխումներ ու տիրէ հանդուրժողականութեան մթնոլորտ մը, որու նախապայմաններէն մին կը հանդիսանայ քաղաքական բանտարկեալներու ազատ արձակումը:

Հնչակեան Կուսակցութեան իւրաքանչիւր համագումար միշտ ալ եղած է շրջադարձային: 19-րդ համագումարը կայանալով մեր ժողովուրդի համար բախտորոշ ժամանակաշրջանի մը, պիտի ստանայ առաւել մեծ կարեւորութիւն: Այս գիտակցութեամբ է որ, յառաջիկայ օրերուն Հնչակեան պատուիրակները կը սկսին ժամանելու Երեւան:

ՔՆԱԹԱԹԱՆ ԱԿՆԱՐԿ ԳԻՇԵՐԱՅԻՆ
ԴԻՒԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՆԴՏԵՐ-ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Մեծ տատիկս ասում էր, «քնենք՝ աշխարհը հանդարտուի» կամ՝ «քնենք. քնելուց լաւ բան չկայ»: Եւ իրօք, նոյնիսկ ամենաբռնակալական երկրներում եւ նոյնիսկ ամենադժնդակ պայմաններում (բանտ, համակենտրոնացման ճամբար եւ այլն), կայ ազատութեան եւ հանգստի գէթ մէկ տեղ, ուր մարդ կարող է ժամանակաւոր թաքնուել. դա գիշերային քաղցր քունն է: Բայց նոյնիսկ, եթէ իմ պէս գիշերներն ուշ էք քնում, էլի կարող էք վայելել համեմատական ազատութեան հաճոյքները:

Օրինակ՝ կարող էք պատկերացնել, որ մինչ դուք ձեր տան խոհանոցում նստած գիշերուայ անուշ հաց-պանիրն էք ուտում, անգերագանցելի Սերխիօ Լիբերտովիչը խոր քուն է մտած. կարելի է ասել՝ չկայ, տարրալուծուել

դից առաջ եկաւ: Այո՛, սիրելիներս, այժմ հայաստանցին պէտք է արթուն մնայ եւ փոխի իր ռեժիմը: Այսինքն, ռեժիմ ասելով՝ կամ իր օրուայ ռեժիմը, կամ վարչակարգը:

Մենք քնած ենք, նրանք՝ արթուն: Մեր վերջին՝ քնելու իրաւունքից մեզ զրկում է: Իսկ եթէ լուրջ, ապա եթէ չէք ուզում մի առաւօտ գարթնել ու իմանալ, որ գիշերը որոշում է ընդունուել հայկական գօրքերն ազատագրուած տարածքներից դուրս բերել, ապա ռեժիմային այս ինդրին պէտք է շատ աւելի կարեւորութիւն տալ, քան տալիս էիք մինչ այսօր:

Օրինակ, եթէ մինչ այժմ գէնք գործածել չգիտէք, լաւ կը լինի, լրացնէք այդ բացը: Մարդ ես, գիշերներն ի՞նչ ասես՝ կարող է պատահել, ինքնապաշտպանուելու հնարաւորութիւն չունենա՞ք գաղտագողի դիւանագի-

Գաղտնի դիւանագիտութիւնը գիտէինք, բա
գաղտագողի՞ն որտեղից առաջ եկաւ:

Այո՛, սիրելիներս, այժմ հայաստանցին պէտք է արթուն մնայ եւ փոխի իր ռեժիմը: Այսինքն, ռեժիմ ասելով՝ կամ իր օրուայ ռեժիմը, կամ վարչակարգը

է երկնային եթերի մէջ, գրուցում է հրեշտակների հետ: Իր բերլուգայում քնած է Մեդվեդեւը, Օպամանիհրնում է՝ իր մանկութեան սիրելի խաղալիք արջուկին գրկած:

Այն ամէնը, ինչ ցերեկային աշխարհի իրականութիւնն է, այդ պահին սոսկ պատրանք է, մինչ երազային պատրանքները՝ իրականութիւն: Ի՞նչ քաղցր է պատկերացնել այդ տեսարանը: Աւելի ճիշդ կը լինէր ասել՝ քաղցր էր: Որովհետեւ այս տարուայ Ապրիլից հայ ժողովուրդը զրկուեց նաեւ ազատութիւնը վայելելու այդ վերջին շնասից: Այժմ հայ ժողովուրդն իրաւունք չունի գիշերները հանգիստ քնել կամ գէթ վերացարկուել իրականութիւնից: Որովհետեւ, երբ առաւօտ շուտ՝ դեռ սուրճը չիմած, քնաթաթախ, ճպուտ աշուկներով հայաստանցին շտապում է իր համակարգչի մօտ՝ իմանալու օրուայ նորութիւնները, պարզում է, որ մինչ ինքը խաղաղ սաւառնում էր Մորփեոսի աշխարհում, իր երկրի ջոջերը գիշերը մի հերթական դարակազմիկ փաստաթուղթ են ստորագրել այլ երկրների ջոջերի հետ: Ու մեր խեղճ հայաստանցին մնում է շուարած. չի հասկանում արդէն՝ արթուն է, թէ՞ դեռ երազում է: Եւ դա դեռ ոչինչ. նա չի կարողանում կողմնորոշուել՝ այսուհետ գիշերները քնի՞, թէ՞ սպասի մինչեւ լուսաբաց՝ համոզուելու, որ հերթական գիշերը նոր անակնկալներ չի բերելու իր հետ:

Այսպէս հայաստանցուց խլուեց իր վերջին ունեցած բանը՝ հանգիստ քունը: Ու մտածում է նա, եթէ էսքան լաւ բան էք անում, ինչի՞ օրը ցերեկով, մարդավարի, բոլորի ներկայութեամբ չէք անում: Ինչո՞ւ էք սպասում մթութեանը եւ մենութեանը: Գաղտնի դիւանագիտութիւնը գիտէինք, բա գաղտագողի՞ն որտե-

տութեան գիշերային թիթեռնիկներից: Մի օր ձեր տունը մտնեն, ուզենան բան-ման տանել, դուք էլ արդէն կազմ-պատրաստ, զգօն կը լինէք:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹ-ԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջամի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐԻԻԷ ՍՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Ֆեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797- 6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

3 ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՐԱՅԱՍԱՆ

ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆ.
«ԱՐԵՒՄՈՒՏՔՆ ՈՒՋՈՒՄ Է ԻՐ
ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ՎԵՐՑՆԵԼ ԿՈՎԿԱՍԸ»

«News.am»: «Հայ-թուրքական նախատորագրուած արձանագրութիւններն ու դրան նախորդած փաստաթղթերը՝ Մայրոքեան հռչակագիրը, մարտի դեմին սկզբունքները, մի բան են նշանակում. Հայաստանի դիւանագիտական լիարժէք պարտութիւն», - հայ-թուրքական ոլորտում զարգացումներին վերաբերող քննարկման ժամանակ նշեց ՀՀ պաշտպանութեան նախկին փոխնախարար, ՄԴՀԿ անդամ Վահան Շիրխանեանը: Նա կարծիք յայտնեց, որ հայ-թուրքական այս արձանագրութիւնները կեանքի կոչելով Արեւմուտքն ուղղում է իր վերահսկողութեան տակ վերցնել Կովկասը: Իսկ դա, ըստ նրա, նշանակում է, որ Հայաստանը դուրս է գալիս անվտանգութեան մէկ համակարգից եւ դեռ չգիտի, թէ որում է ընդգրկուելու յետոյ:



ՄԴՀԿ անդամ Վահան Շիրխանեան

Թուրքիայից էլ պէտք է ՆԱՏՕ-ի գործերը դուրս գան, Եթէ Ղարաբաղից պէտք է հայկական գործերը դուրս գան, ես էլ պնդում եմ, որ պէտք է Կիպրոսից թուրքական 40 հազարանոց զորքերը դուրս գան: Եթէ երկու երկրներ իրար հետ յարաբերութիւններ են ստեղծում, պայմանագիրը կնքում է հայեւային սկզբունքով. Այսինքն դու ինձ ես պայման դնում, ես՝ քեզ եւ դրանք պէտք է համարժէք լինեն», - ասաց Վ. Շիրխանեան:

«Ինչ է ստանալու Հայաստանը փոխելով իր անվտանգութեան համակարգը», - հետտորական հարց ուղղեց նա ու ինքն էլ պատասխանեց. «Հայերը միշտ տուժել են, երբ փոխել են իրենց կողմնորոշումը»:

ՀԱԿ-Ի ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀՐԱՒՐԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄԻՆ
ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԻ

Հայ Ազգային Կոնգրէսին անդամակցող կուսակցութիւնները չեն մասնակցի Սեպտեմբերի 17-ին նախագահ Սերժ Սարգսեանի կողմից հրաւիրուած քննարկմանը:

Հայոց Համազգային Շարժում (ՀՀՇ) կուսակցութեան վարչութեան անդամ Արամ Մանուկեանի կարծիքով, նախագահի հրաւիրած քննարկմանը մասնակցելու են «անուն չունեցող, դէմք չունեցող, ոչ յայտնի կուսակցութիւնները»:

«Առաջ անցնելով ասեմ, որ մենք չենք մասնակցելու այդ քննարկումներին, իմիտացիայի մասնակցելու ամենեւին ցանկութիւն չունենք, թատրոն խաղալու ցանկութիւն չունենք, առաւել եւս այս իշխանութիւնների հետ, որոնք բացարձակ կապ չունեն այդ փաստաթղթերի հետ: Սա դրսից պարտադրուած փաստաթուղթ է, որին ընդդիմանալ պարզապէս չեն կարողացել մեր իշխանութիւնները», - յայտարարեց Մանուկեանը, լաւելելով. - «Իրենց համար քննարկումները ամենեւին կարելի չեն: Դա պարտադրանք է, պայմանաւորուածութիւն է, որ պէտք է անցկացնել, եւ այդ իմիտացիան անելու են»:

Հարցին, թէ ում կողմից են պարտադրուած այդ փաստաթղթերը, Մանուկեանը պատասխանեց. - «Դրան շատ կոնկրետ, շատ կարճ կարող եմ ասել՝ Հայաստանը շատ աւելի քիչ դեր ունի այս երկու արձանագրութիւնների կազմման եւ առաջ մղման գործում, քան նոյնիսկ Ադրբեջանը: Սա դրսից պարտադրուած փաստաթուղթ է, որին ընդդիմանալ պարզապէս չեն կարողացել մեր իշխանութիւնները»:

Իսկ հարցին, թէ ինչպէս է Հայ Ազգային Կոնգրէսը կանխելու արձանագրութիւնների ստորագրումը, Արամ Մանուկեանը արձագանքեց. -

«Մեր օգնութիւնը կը լինի Սերժ Սարգսեանին այն, որ ինքը կարող է հրաժարական տալ. դա չստորագրելու մի ձեւ է... Կ'անցկացուեն արտահերթ ընտրութիւնները, յետոյ կը տեսնենք»:

Հայ Ազգային Կոնգրէսի մաս կազմող Հայաստանի ժողովրդական կուսակցութեան (ՀԺԿ) առաջնորդ Ստեփան Դեմիրճեանին հրաւիրի ձեւը խիստ վրդովեցրել էր: «Հրաւիրի նման անտակտ ձեւը ընդունելի չէ, անկախ ամէն ինչից», - յայտարարեց Դեմիրճեանը:

Հայաստանի նախագահի մամուլի խօսնակ Սամուէլ Ֆարմանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հաւաստիացրեց, որ բոլոր հրաւիրեալներին նամակ ուղարկուած է, եւ կոնկրետ ՀՀՇ-ի կամ ՀԺԿ-ի դէպքում հրաւիր-նամակների ուղարկման գործընթացը ընթացքի մէջ է:

Ֆարմանեանը հերքեց ընդդիմադիրների պնդումը, թէ նրանց առաջարկուել է նախագահականից վերցնել իրենց հրաւիրները:

Կոնգրէսին մաս կազմող Սոցիալ-դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան ղեկավար Լիւդմիլա Սարգսեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցեց, որ քննարկմանը չեն մասնակցելու, քանի որ վստահ են, որ «գործող նախագահը ազատ չէ իր որոշումներում եւ պարտադրուած ստորագրելու է այդ փաստաթղթերը»:

Քննարկումներին մասնակցելու մասին որոշում դեռեւս չի կայացրել «Ժառանգութիւն»-ը: Կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ հարցը կը քննարկեն կուսակցութիւնում եւ որոշման մասին տեղեակ կը պահեն:

ԵՂՈՒԱՐԴ ՇԱՐՄԱԶԱՆՈՎ.
«ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ ԿԸ ՓՈՐՁԵՆՔ
ՀԻՄՆԱԴՈՐԵԼ ՍԵՐ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԻ
ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ նախատորագրուած արձանագրութիւնների առնչութեամբ քաղաքական խորհրդակցութիւնները Հայաստանում կը լինեն տարբեր ձեւաչափի: «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում այդպիսի կարծիք յայտնեց Հանրապետական կուսակցութեան մամուլի խօսնակ, Ազգային ժողովի Հանրապետական խմբակցութեան քարտուղար Էղուարդ Շարմազանովը:



ԱԺ Հանրապետական խմբակցութեան քարտուղար Էղուարդ Շարմազանով

«Կարծում եմ, որ արդէն հիմա կայ՝ մամուլի ակումբների կամ «կլոր սեղանների» ֆորմատը, բայց կարծում եմ, որ խորհրդակցութիւններ կը լինեն նաեւ խորհրդարանի եւ խորհրդարանից դուրս խումբ-խմբակցութիւնների միջոցով, նաեւ արտգործնախարարութիւնը խորհրդարանում որոշակի խորհրդակցութիւններ կ'անի, այսինքն՝ խորհրդարանական ուժերը կարող են աւելի փակ պայմաններում աւելի լայն քննարկում իրականացնել», - ասաց Շարմազանովը՝ չաւելելով. - «Եւ քանի որ նաեւ Հայաստանում հանրապետութեան նախագահ պարոն Սարգսեանը նոր մշակույթ մտցրեց, երբ կարելորագոյն հանրային քննարկումներ է կատարում, այսինքն՝ այս կամ այն կարելորագոյն հանրային մեծ հարցերի շուրջ նա արդէն երկու քննարկում արել է քաղաքական կուսակցութիւնների հետ, կոնսուլտացիաներ, կոնկրետ մէկը՝ Ղարաբաղի հետ կապուած, միւսը՝ համաշխարհային ճգնաժամի հետ կապուած, չեմ բացառում, որ նմանատիպ որոշակի

քննարկումներ լինեն, որովհետեւ այս հարցը շատ կարեւոր է»:

«Չենց նախագահ Սարգսեանն է իր խօսքում ասել, որ ինքը շատ է կարեւորում եւ խրախուսում քաղաքական քննարկումները եւ ոչ միայն քաղաքական, այլ թուով նաեւ հանրային քննարկումները, որտեղ կը մասնակցեն ոչ միայն քաղաքական ուժերի, այլ նաեւ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները», - նշեց Հանրապետականի խօսնակը:

Խորհրդակցութիւնների արդիւնքում արձանագրութիւններում ինչ-ինչ փոփոխութիւնների հնարաւորութեան վերաբերեալ հարցին Էղուարդ Շարմազանովը արձագանքեց. - «Ես չեմ կարող դրա պատասխանը տալ, բայց ես կարծում եմ, որ քննարկումները իրենց արդիւնքը կը տան, բոլոր կողմերն էլ կարող են լսել մէկը միւսին եւ հիմնաւորել իրենց կարծիքը՝ խօսքը սրա մասին է»:

Զ. ԹԱՂԵՒՈՍԵԱՆ. «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆ»
ԱՃՈՒՐԴԻ Է ՀԱՆՈՒԵԼՈՒ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր-առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը Սեպտեմբերի 9-ին կուսակցութեան մի քանի անդամներին նամակ է յղել, որով յայտնել է, որ հեռանում է «Ժառանգութիւնից»:



«Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր Զոհա Թաղեւոսեան

Այդ մասին Սեպտեմբերի 14-ի ասուլիսին յայտարարեց «Ժառանգութեան» վարչութեան որոշմամբ կուսակցութիւնից հեռացուած Զոհա Թաղեւոսեանը, չաւելելով, որ նամակի մասին նա իմացել է միայն երէկ, բայց նամակի բովանդակութիւնը գաղտնի է պահուած կուսակցութեան շարքային անդամներից:

Հեռացուած կուսակցականի խօսքերով, Բ. Յովհաննիսեանի նամակից յետոյ կուսակցութեան միւս անդամների «ձեռքի կապանքները բացուել են», ինչը եւ յանգեցրեց «Ժառանգութիւնում» մոլեզման ճգնաժամին:

«Բաֆֆի Յովհաննիսեանի հրաժարականից յետոյ, «Ժառանգութիւն» կուսակցութիւն այլեւս չկայ», - յայտարարեց Զ. Թաղեւոսեանը, չաւելելով, որ կուսակցութիւնում ներկայ պահին իշխանութիւնը կենտրոնացուած է «Ստալինեան եռեակի» ձեռքում: Նա չպատասխանեց լրագրողների հարցին, թէ ովքեր են այդ եռեակի մէջ, միայն ասաց, որ «Ժառանգութեան» վարչութեան վերջին նիստից յետոյ կուսակցութեան ղեկավարութիւնը ստանձնած Արմէն Մարտիրոսեանը «Նիգ-Ապարան» հայրենակցական միութեան անդամ է: Զ. Թաղեւոսեանը ասաց, որ այդ կազմակերպութիւնը

քաղաքական է, քանի որ ժամանակին ընտրութիւններին սատարել էր Սերժ Սարգսեանին եւ Գագիկ Բեգլարեանին, եւ չաւելեց, որ դրանով «Ժառանգութիւնը» ենթարկուած է իշխանութիւններին:

Ըստ բանախօսի, ներկայ պահին «Ժառանգութեան» մօտ 2 հազար անդամներից զգալի մասը պատրաստուած է բոյկոտել ԱԺ պատգամաւոր վարդան խաչատրեանին, ԿԸՅ-ում ներկայացուցիչ Զոհա Թաղեւոսեանին եւ Մովսէս Արիստակէսեանին կուսակցութիւնից հեռացնելու վարչութեան որոշումը, ընդհուպ մինչեւ «Ժառանգութեան» շարքերը լքելը:

«Կուսակցութիւնն աճուրդի է դրուելու», - ասաց Զ. Թաղեւոսեանը, չաւելելով, որ «Ժառանգութիւնից» հեռացուած, ինչպէս նաեւ դուրս գալ պատրաստուող այլ համակուսակցականների հետ նոր կուսակցութիւն կը փորձեն հիմնել:

«ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՄՏԱԴԻՐ ԵՆ ԶԻՋԵԼ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ, ԹՈՂ ԴՐԱՆՑԻՑ ՔԱՄԵՆ-ԶԱՏԵՆ ՄԵՐ ԶԱԽԱԿՆԵՐԻ ԱՐԻԻՆԸ»

ԼՂՀ գոհուած գինձառայողների հարազատների միութիւնը հանդէս է եկել յայտարարութեամբ, որում մասնաւորապէս ասուած է. «Բանակցային գործընթացում շրջանառութեան մէջ դրուած փոխզիջումներ հասկացութիւնն ըստ էութեան միակողմանի գիշումներ է նշանակում, այն էլ դարաբաղեան կողմից: Փաստորէն, գիշում ենք միայն մենք, իսկ Ադրբեյջանի գլխաւոր փոխգիշումը պատերազմը չվերսկսեցն է: Տարօրինակ է, որ պատերազմի վերսկսումը սպառնալիք ու չվերսկսումը իր կողմից փոխգիշում է համարում պատերազմում պարտուած կողմը: Մինչդեռ տրամաբանական կը լինէր, որ սա գիշում լինէր պատերազմում յաղթած դարաբաղեան կողմի համար: Ընդհանրապէս, շատ աւելի ընկալելի կը լինէր, որ պատերազմի չվերսկսումը ոչ թէ գիշում լինէր, այլ բանակցային գործընթացի պայման, որը վերաբերում է բոլորին: Անտրամաբանական ու ստորացնող են նաեւ Ադրբեյջանի միւս «գիշումները», ըստ որոնց՝ Բաքուն մի կերպ համաձայնուած է մեզ վերադարձնել մեզնից խլուելիքի մի չնչին մասը: Մեզ խորապէս անհանգստացնում է նաեւ այն հանգամանքը, որ ԼՂՀ-ն դուրս է մնացել բանակցային գործընթացից, մինչդեռ բոլորի հա-

մար էլ պարզ պիտի լինի, որ այդ գործընթացը կարող է արդիւնաւէտ լինել միայն այն դէպքում, եթէ վերականգնուի լիարժէք բանակցային գործընթացը ԼՂՀ-ի, Ադրբեյջանի եւ Հայաստանի մասնակցութեամբ, եւ եթէ ապահովուի նաեւ դարաբաղա-արդրեանական անմիջական երկխօսութիւն: Խորապէս համոզուած ենք, որ դարաբաղեան կողմը չի կարող որեւէ պարտաւորութիւն ստանձնել առանց իր մասնակցութեան ձեռք բերուած ցանկացած պայմանաւորութեան կամ ստորագրութեան համաձայնագրի համար: Որքան մենք ենք հասկանում, դարաբաղեան կողմը ոչ մէկին չի լիազօրել ներկայացնելու իր շահերը եւ վերջնական խօսքը պիտի վերապահի իրեն: Մեզ շատ է անհանգստացնում նաեւ գաղտնիութեան մթնոլորտը: ԼՂՀ իշխանութիւններին կոչ ենք անում քողագերծել բանակցային գործընթացը, անկեղծ ու բաց երկխօսութիւն սկսել սեփական ժողովրդի հետ ու խորախուսել հանրային քննարկումներ, քանի որ մեր ճակատագրի մասին որոշում պիտի ընդունենք բոլորս՝ համայն ժողովուրդը: Նրանք, ովքեր մտադիր են գիշել այդ տարածքները, թող դրանցից քամեն-գատեն մեր գաւակների արիւնը: Մեր գաւակների արիւնը ուրիշին տալու իրաւունք չունենք»:

ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏԱՐԱՆՑԻԿ ԿԵՆՏՐՈՆ ԿԸ ԼԻՆԻ ԵՐՁՐՈՒՄԸ

Մինչ թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն հանդիպումներ է անցկացնում ընդդիմադիր կուսակցութիւնների հետ հայ-թուրքական յարաբերութիւնների նոր գարգացումները քննարկելով, երկրի կառավարութիւնը որոշակի քայլեր է կատարում տուեալ ուղղութեամբ: Ինչպէս Tert.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնեցին լաւատեղեակ աղբիւրները Ստամբուլից, թուրքիայի իշխանութիւնները սկսել են երկրի արեւելեան հատուածում գտնուող որոշ ճանապարհների ակտիւ վերանորոգումը: Մեր գրուցակցի հաղորդմամբ, սահմանի բացման դէպքում թուրքիան ինչ-ինչ պատճառներով չի ցանկանում որպէս տարանցիկ կենտրոն օգտագործել Կարսը: Նրա խօսքով, այժմ բարելաւում են էրզրումի ենթակառուցուածքները եւ հենց այդ քաղաքի վրայ է «խաղաղորդք» կատարելու թուրքիան հայ-թուրքական սահմանի բացման դէպքում:

պաշտօնեաների հանդիպումների անցկացում: Սակայն, Հայաստանի Հանրապետութեան նախագահի աշխատանքային օրացուցում թուրքիայի վարչապետի հետ նման հանդիպում նախատեսուած չէ: «Նշուած օրը՝ Սեպտեմբերի 21-ին, Սերժ Սարգսեանը Երեւանում կը մասնակցի Հայաստանի Հանրապետութեան անկախութեան սօսի առթիւ իր անունից տրուելիք ականդակական պաշտօնական ընդունելութեանը», - ասել է ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ 48-ՐԴ ՀՈՐԻՁՈՆԱԿԱՆՈՒՄ Է

Ֆրէյզերի ինստիտուտը հրատարակել է տնտեսական ազատութիւնների նոր վարկանիշը, որում Հայաստանը յայտնուել է 48-րդ հորիզոնականում: Վարկանիշային աղիւսակը ներկայացնում է տնտեսական ազատութիւնները 2007թ. դրութեամբ եւ նրանում հաշուի չեն առնուել 2008 եւ 2009թ. տուեալները: Առաջատարը Հոնկոնգն է՝ 8,97 միւլտրոն: 8 միւլտրոնից աւելի են ստացել նաեւ Սինգապուրը, Նոր Զելանդիան, Շուէյցարիան, Զիլին եւ ԱՄՆ-ը: Աւստրալիան եւ Մեծ Բրիտանիան իրար մէջ բաժանել են 9-10-րդ հորիզոնականները՝ 7,89 միւլտրոնով: Նախկին խՍՀՄ երկրներից լաւագոյն տեղում էստոնիան է՝ 21-րդ տեղ: Հայաստանը 48-րդն է, Ռուսաստանը՝ 83-րդը, թուրքիան՝ 88-րդը:

ՈՒՐՈՒԳՈՒԱՅԻ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ ՀԱՆԴԵՍ ԵՆ ԵԿԵԼ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄՔ՝ ՀԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄՔ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»:
Ուրագուայի իշխանութեանը մաս կազմող Սոցիալիստական կուսակցութեան ղեկավարութիւնը յայտարարութեամբ է հանդէս եկել Հայաստանի եւ թուրքիայի միջեւ ստորագրուած նախնական համաձայնութեան վերաբերեալ: Ուրագուայի սոցիալիստները «գոհուած կը լինեն են յայտնուած այն փաստի առնչութեամբ, երբ աշխարհի ցանկացած մասում ժողովուրդները կամ երկրները դիմում են երկխօսութեան՝ իրենց յարաբերութիւնները բարելաւելու կամ ձգնաժամային իրավիճակները յաղթահարելու նպատակով, ուստի ողջունելի է թուրքիայի եւ Հայաստանի պարագան»:
«Սակայն բանակցութիւնները դրական կը լինեն, երբ շահում են երկու կողմերը: Եթէ մի կողմն է միայն շահում, ապա ոչ թէ լուծուած են հարցերը, այլ նոր հակամարտութիւն է ծնուած», - նշում է յայտարարութիւնում:
Ուրագուայի սոցիալիստական կուսակցութիւնը, սակայն, «պար-

տաւորութիւն է գգում գգուշացնելու այն դրոյթի առնչութեամբ, որը վերաբերում է պատմական հարցերին եւ մասնագէտների ենթայայնաձգողութիւն, որն իբր պէտք է վճռի՝ Օսմանեան կայսրութիւնում հայերի ցեղասպանութիւն եղել է թե ոչ», նշելով. - «Դժուար չէ արձանագրել, որ այս կէտը վիրաւորում է մարդկային արժանապատուութիւնը»:
Յայտարարութիւնը ստորագրել են կուսակցութեան ընդհանուր քարտուղար Էդուարդո Ֆերնանդէսը եւ միջազգային յարաբերութիւնների գծով քարտուղար Մանուէլ Լագուարդան:
Յայտարարութեան մէջ նաեւ նշուած է, որ «1965-ին Ուրագուայի Հանրապետութիւնը ընդունել է օրէնք՝ դատապարտելով 1915 թուականի ցեղասպանութիւնը», եւ կոչ է արւում աշխարհին «զօրակցութիւն յայտնել հայ ժողովրդի ճշմարտութեան եւ արդարութեան պայքարին, ինչպէս նաեւ Լեւոնային Ղարաբաղում հայ ժողովրդի արդար պահանջատիրութեանը»:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԿՈՂՄԱԿԻՑՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն
դունելի գնով անգամ, ստանում է միայն թղթի վրայ խոստումներ սահմանը բացելու մասին: Աւելին, եթէ առաջ թուրքիան կարող էր բացել սահմանը կառավարութեան որոշումով, արձանագրութիւններ ընդունման հետեւանքով դա հնարաւոր կը լինի միայն թուրքիայի խորհրդարանի կողմից արձանագրութիւնների վաւերացման դէպքում: Սա թող է տալիս թուրքիայի կառավարութեանը ձեւակաւորելու ցուցադրել իր կառուցողականութիւնը հայ-թուրքական կարգաւորման գործում, այն Ղարաբաղի խնդրի լուծումով պայմանաւորելու առաքելութիւնը դնելով խորհրդարանի վրայ»:
Շարունակելով ՀԱԿ-ի յայտարարութիւնը կ'ըսէ. «Ռեժիմը տեղի է տուել նաեւ թուրքիայի կողմից ներկայացուած մէկ այլ նախապայմանի կատարման պահանջին. անախադէպ երկկողմանի յատուկ պայմանագրով սահմանների անձեռնմխելիութեան եւ տարածքային ամբողջականութեան ճանաչմանը, մինչդեռ մի կողմից,

Հայաստանը նման յաւելեալ քայլի դիմելու կարիք չունի, քանի որ անդամակցելով ՄԱԿ-ին եւ ԵԱԶԿ-ին ընդունել է միջազգային իրաւունքի այդ հիմնարար սկզբունքները, եւ, միւս կողմից, չգիտես ինչու, արձանագրութիւններում չի շատակուած չէ միջազգային իրաւունքի մէկ այլ հիմնարար սկզբունք՝ ազգերի ինքնորոշման իրաւունքը»:
Այսպիսով ռեժիմի պնդումները այն մասին, թէ իբր նրան յաջողուել է առանց նախապայմանների համաձայնութեան հասնել թուրքիայի հետ, եւ մասնաւորապէս, տարանջատել հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը Ղարաբաղի խնդրի լուծումից, ակնյայտ կեղծիք են»:
Վերջաւորութեան Հայ Ազգային Գոնկրէսը կը յայտնէ որ, Հայաստանի վարչախումբը ցուցադրեց, որ, չունենալով ներքին օրինականութիւն, պատրաստ է անընդունելի եւ անհարկի գիշումներու երթալ արտաքին քաղաքականութեան բնագաւառէն ներս, սեփական իշխանութիւնը ամրապնդելու եւ արտաքին օրինականութիւն ձեռք ձգելու նպատակով:

ԹՐԵԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԿՍԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն
խորհրդարանի ամենամեծ ընդդիմադիր խմբակցութեան՝ 112 պատգամաւոր ունեցող «Ժողովրդահայրապետական» կուսակցութեան առաջնորդ Դենիզ Պայքալ: Ան պնդած է, թէ արձանագրութիւններում մէջ կան շարք մը դրոյթներ, բացի սահմանը բանալու կէտէն, որոնք շատ երկիմաստ են»
«Հոն ակնարկներ չկան Ատրպէյճանի գրաւեալ տարածքներու եւ Կարսի համաձայնագրի ճանաչելու մասին: Որեւէ բան յստակ չէ նաեւ «այսպէս կոչուած ցեղասպանութեան շուք պնդումները» վերաբերեալ. ինչպէս պիտի լուծուի այս հարցը եւ ինչ գիտնականներ պիտի ընդգրկ-

ուին միջկառավարական ենթայայնաձգողութիւններ, - ըսած է Պայքալ:
Թուրք նախարարը իր այդ օրուայ քննարկումները աւարտած է Ձախ-ժողովրդավարական կուսակցութեան հետ, որու առաջնորդ Մասում թիւրքեր յայտարարած է, թէ հանդիպումը եղած է արդիւնաւէտ եւ տեղեկութիւններով յագեցած:
Դավութօղլու շեշտած է, թէ որքան կարեւոր է այս հարցով ազգային փոխհամաձայնութիւնը եւ վերահաստատած է իր կոչը ընդդիմադիրներուն՝ ուշադրութեամբ քննել Հայաստանի հետ նախաստորագրուած արձանագրութիւնները եւ առաւելագոյն աջակցութիւնը ցուցաբերել հաշտեցման գործընթացին:

ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Բ.Ը.Ս.Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ԿՈՂՄԵ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒԿ ԵՒ ՆԱԽԱԳԻԾԵՐՈՒՄ ԱՌԻԹՈՎ

31 Օգոստոս 2009ին, Հայաստանի Հանրապետության Արտաքին Գործոց Նախարարությունը, Զուգահեռաբար Արտաքին Գործոց Դաշնակցային Բաժանմունքին և Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարության հետ համատեղ, հրապարակեց Հայաստանի և Թուրքիոյ միջև դիվանագիտական յարաբերություններու հաստատման և զոյգ երկիրներու միջև յարաբերություններու բնականոնացումի, հիւպատոսական ներկայացուցչություններու հաստատման և և ներկայ սահմաններու բացման ուղղութեամբ առնուելիք նախաքայլերը:

Հայ և Թուրք ժողովուրդներու յարաբերութեանց և նորանկախ Հայաստանի Հանրապետութեան համար պատմականորէն յատկանշական իրադարձութիւն մըն է այս, որ ծանրակշիռ անդրադարձներ պիտի ունենայ Հայաստանի Հանրապետութեան և աշխարհատարած հայութեան համար: Մեր ժողովուրդը, հայրենիքի թէ պիւրքի մէջ, արդէն սպասումով և մտահոգութեամբ կը հետեւէր Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումին շուրջ ժամանակէ մը ի վեր ընթացող բնակցութիւններու արձագանգներուն:

Կը գիտակցինք թէ Հայաստանի դիվանագրաւած աշխարհաքաղաքական մարտահրաւէրները կը մղեն Հայաստանի պետութիւնը որ գործնապաշտ քաղաքականութեամբ մը դրական կեցուածք և անկեղծ տրամադրութիւն ցուցաբերէ Թուրքիոյ հետ բնակցութիւններ նորաձեռնելու ուղղութեամբ: Այդ կողմնորոշումը կը բխի ազգային ապահովութեան պահանջներէն, նաեւ երկրի տնտեսութեան զարգացման համար կենսական նշանակութիւն ունեցող հաղորդակցութեան միջոցներու ապահովումին և շրջանային քաղաքական թէ տնտեսական համագործակցութեան ծրագրներուն մաս կազմելու մտահոգութիւններէն: Այդ բնական քաղաքականութիւնը սակայն չի կրնար կենսագործուիլ ի հաշիւ հայ ժողովուրդի պատմական անժամանցելի իրաւունքներուն: Կը հաւատանք թէ Հայաստանի պաշտօնական դեկավար մարմինները պետութեան տնօրինողները և միաժամանակ անոր ապագան ապահովողներն են: Հետեւեալքերը երբ կոչուած են դժուարին և հեռահաս որոշումներ առնելու, անոնք պէտք է առաջնորդուին համագրգային նպատակակէտերով և ձգտումներով:

Հայաստան-Թուրքիա դիվանագիտական յարաբերութիւններու մշակման նախագիծերը, ուղղակի թէ անուղղակի կերպով, կ'անդրադառնան Յեղասպանութեան և մեր հողային պահանջներուն: Մինչ կը

գիտակցինք և կ'ըմբռնենք Հայաստանի համար դրացի երկիրներուն, ի շարքս որոնց Թուրքիոյ հետ դիվանագիտական բնականոն յարաբերութիւններ ունենալու անհրաժեշտութիւնը, մեզի համար անժամանցելի Հայ Դատը, իր ամբողջական առումով, և հայութեան դէմ գործադրուած Յեղասպանութեան միջազգային ճանաչումը, գերիվեր են դիվանագիտական ամէն նկատառումէ և բնակցութեան նիւթ չեն կրնար դառնալ:

Հայաստան-Թուրքիա երկխօսութեան նախաքայլը դրականորէն ընդունուեցաւ ազգերու բնասիրին կողմէ: Միակ ընդգիծացողը ցարդ Ատրպէյճանն էր, որ Թուրքիոյ հետ գործակցաբար կը շարունակէ Հայաստանը շրջափակել գրեթէ երկու տասնամեակներէ ի վեր:

Հայաստանի հետ մօտեցումի նախաձեռնութիւնը կասեցնելու համար, Թուրքիա առաջ մղած էր Արցախի վերաբերեալ բնակցութիւններու պատրուակը: Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու բնականոնացումի ներկայ նախածրագիրը պէտք է պայմանաւորուի Արցախի հիմնահարցին շուրջ տարուող բնակցութիւններուն գործընթացով: Արցախահայութիւնը, ժողովուրդներու ինքնորոշման սրբազան իրաւունքին նուիրագործումով, ազատորէն ապրելու իր կամքը արտայայտած է արդէն:

Թուրքիա կը գտնուի պատմական հազուադէպ առիթի մը առջեւ: Ան պէտք է ցուցաբերէ գործակցութեան անկեղծ տրամադրութիւն: Եթէ զանազան պատճառաբանութիւններով, ան շարունակէ ձգձգումի իր քաղաքականութիւնը և խուսափի իր ստանձնած պարտաւորութիւններէն, պիտի արժանանայ շրջանային շահեր և ազդեցութիւններ ունեցող երկիրներուն կշտամբանքին, տրուած ըլլալով որ անոնք քաջալեր կը հանդիսանան Հայաստան-Թուրքիա երկխօսութեան և յարաբերութիւններու բնականոնացումի նախաձեռնութեան:

Երկու երկիրներու միջև յարաբերութիւններու մշակումին ուղղութեամբ Հայաստանի ցուցաբերած դիվանագիտական այս յանդուգն նախաձեռնութիւնը երբ ընթացք ստանայ, Թուրքիան պիտի գտնուի միջազգային իր պարտաւորանքին և պետութեանց ու միջազգային մարմիններու տուած խոստումները յարգելու ակներբ և ընտանիքին առջեւ: Եւրոպայի հետ միութեան իր ձգտումէն բխող յայտարարութիւններով, Թուրքիա ինքզինք կողմնակից կը դասէ մարդկային իրաւանց սկզբունքներու ճանաչումին և ժողովրդավարութեան: Ան

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՌԱԿԻՊ ԶԱՐԱՔՕԼՈՒԻ ՀԵՏ

Ինչպէս ծանօթ է, Թուրք լրագրող, հրատարակիչ Ռակիպ Զարաքօլու վերջերս այցելեց Լիբանան, մասնակցելու Հայկազեան Համալսարանի և Միջին Արեւելքի Հայ Դատի գրասենեակին կողմէ կազմակերպուած «Հայոց Յեղասպանութիւնը և Միջազգային Օրէնքը» միջազգային ակադեմական խորհրդաժողովին:

Խորհրդաժողովին աւարտէն ետք նախապէս առնուած ժամադրութեան մը համաձայն, Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի պատուիրակութիւն մը, Կեդրոնական Վարչութեան անդամ ընկ. տոքթ. Եղիկ ձէրէճեանի ընկերակցութեամբ, տեսակցութիւն մը ունեցաւ «Պելժ» հրատարակչատան հիմնադիր, ծանօթ մտաւորական, լրագրող, մարդկային իրաւունքներու պաշտպանութեան գանազան մը ցանակներու դափնեկիր Ռակիպ Զարաքօլուի հետ:

Շահեկան այս հանդիպումը առիթ մը եղաւ գրուեցելու Թուրքիոյ մէջ մարդկային իրաւանց հարցերու, Զարաքօլուի գլխաւորած հրատարակչատան լոյս ընծայած հրատարակութիւններուն, Հայկական Յեղասպանութեան ճանաչման հետ առնչուած հարցերու շուրջ:

Ռակիպ Զարաքօլու արժեւորեց Հայ ազգային ազատագրական պայքարի ընթացքին Հնչակեան Կուսակցութեան դերակատարութիւնը յատկապէս շեշտելով Իթիհատի դէմ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան պայքարի շրջանը: Զարաքօլու յայտնեց, թէ Սարգիս Չերքեզեան անունով անձնաւորութենէ մը իրագեկ

դարձած էր, թէ Հնչակեան

Քսան կախադանները նախապէս թաղուած էին Իսթանպուլի հայկական գերեզմանատունը, սակայն հետագային անոնց աճիւնը գաղտնօրէն փոխադրուած էր Իսթանպուլի Յեղափոխութեան նահատակներու գերեզմանատունը և տեղադրուած է յուշարձանի մը տակ: Սարգիս Չերքեզեան, 94 տարեկան, մահացած է ամիս մը առաջ: Ընկերները, Ռակիպ Զարաքօլուին յանձնեցին վերջերս «Արարատ»ի մէջ թարգմանաբար անոր ստորագրութեամբ լոյս տեսած երկու յօդուածներ: Իր կարգին, Զարաքօլու նուիրեց իր հրատարակչատունէն լոյս տեսած երկու գիրքեր: Զարաքօլու յիշատակեց, թէ Կիլիկիոյ հայկական հրատարակչութիւններուն մասին գիրքի մը պատրաստութեան լծուած է ներկայիս: Այս առիթով, ան հաղորդեց, որ նախքան Կիլիկիայէն ֆրանսական իշխանութիւններուն հեռացումը, Կիլիկիոյ հայ համայնքը ֆրանսական իշխանութիւններուն յանձնած է Կիլիկիոյ մէջ հայ համայնքին ունեցած հրատարակչութիւններուն մասին կարեւոր փաստաթուղթ մը: Զարաքօլու նշեց, թէ փաստաթուղթէն օրինակ մը յանձնուած է Լիբանանի եկեղեցական իշխանութիւններուն: Ընկերները պատրաստակամութիւն ցայտնեցին հետաքրքրուելու ինդրոյ առարկայ փաստաթուղթին մասին:

Շուրջ ժամ մը տեւող տեսակցութիւնը աւարտեցաւ կրկին հանդիպելու և յարաբերութիւնները սերտացնելու փոխադարձ մաղթանքներով:

Իբրեւ համահայկական Միութիւն և տարագիր հայութեան իղձեւոր և ձգտումներուն արտայայտիչը, Հ. Բ. Ը. Միութիւնը կը կողմնորոշուի Հայ ժողովուրդի ծառայութեան նուիրուած աւելի քան հարիւրամեայ իր աւանդութիւնը բնորոշող ազգային քաղաքականութեան անշեղ սկզբունքներով: Միշտ գորավիզ Հայրենի ժողովուրդին և նուիրուած՝ հայ ազգի անձեռնմխելի իրաւունքներուն և պատմական, նիւթական ու մշակութային ժառանգութեան պաշտպանութեան:

Այս առիթով կոչ կ'ուղղենք բոլորին, հայրենի պետութեան հետ համախորհուրդ և հայութեան բոլոր հատուածներուն միջև արդիւնաւոր համագործակցութեան ազնիւ ոգիով դիմագրաւելու պատմական այս պահու մարտահրաւէրները՝ զգօնութեամբ և ազգային միասնականութեամբ:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողով Նիւ Եորք, 10 Սեպտեմբեր 2009

STUՒՔ՝ ԵՐԹ BANKRUPTCY-Ի ՕՐԵՆՔՆԵՐԸ ԿՕԳՆԵՆ ԶԵՁԻ, ԶԱՆԳԱՅԱՐԷ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

ՀԱՅԵԱՑՔ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՉ

**ՅԱԿՈԲԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»**

Հայ-թուրքական թեմայի շուրջ բանավեճերի եւ քննարկումների մասնակից իշխանական մոլորակները, որոնց դերում առաւել յաճախ հանդէս են գալիս ոչ թէ իշխանական քաղաքական գործիչներ, այլ այսպէս կոչուած անկախ քաղաքագէտներ, որոնց լսելիս պարզ է դառնում, որ նրանց խնդիրը ոչ թէ երեւոյթը բացատրելն է, թէկուզ իշխանական տեսանկիւնից, այլ ընդամէնը՝ «լաւ է, լաւ է, շատ լաւ է» ասելը, որդեգրել են բաւական հետաքրքիր կեցուածք: Այդ կեցուածքի, բանավեճի մարտավարութեան առանձնատեսակներն այն է, որ նրանք փորձում են խնդիրը ներկայացնել այնպէս, թէ ով դէմ է արտայայտուած հայ-թուրքական յարաբերութեան կարգաւորման ներկայիս գործընթացին, որ իրականացնում է իշխանութիւնը, նա դէմ է հայ-թուրքական սահմանը բացելուն: Սա Հայաստանի իշխանական եւ իշխանամերձ մտքին բնորոշ գիծ է՝ փոխել հասկացութիւնները, շեղել թեման եւ բանավեճը վերածել տրիվիալ պնդումների:


Մինչդեռ բոլորին պարզ է, որ հայ-թուրքական յարաբերութեան կարգաւորման ներկայիս գործընթացի հանդէպ հիմնական քննադատութեան առանցքը ամենեւին այն չէ, որ պէտք է բացել հայ-թուրքական սահմանը: Քննադատութեան բուն թեման այն է, թէ ինչ գնով, ինչի կամ ում հաշուին է այդ սահմանը բացուած, ինչ է տալիս Հայաստանն այդ սահմանը բացելու դիմաց եւ արդեօք այդ տուածը համարժէք է այն արդիւնքին, որ կը լինի սահմանը բացելու պահին եւ դրանից յետոյ: Կամ արդեօք թուրքերը սահմանը բացելու շուրջ այս բանակցութեան ընթացքում այդ խնդիրը չեն օգտագործում Հայաստանի քիչից բռնած ման ածելու

համար: Դա է խնդիրը, ոչ թէ սահմանի բաց կամ փակ վիճակի գերադասութիւնը, ուր որ փորձում են բանավեճը տանել իշխանական մոլորակները, ասելով, որ գործընթացն է կարեւոր, կարեւոր է, որ լինի գործընթաց: Բայց արդեօք նրանք բացատրում են, թէ օրինակ ինչ է շահում Հայաստանն այդ գործընթացից, եւ ինչ է կորցնում: Արդեօք նրանք ասում են, թէ ինչ տեսքով պէտք է լինի այդ գործընթացը: Թէ նրանց համար տեսքը կապ չունի, կարեւորը, որ լինի, եթէ նոյնիսկ այդ գործընթացի ընթացքում Հայաստանը յայտնուած է «առողջիկի» կարգավիճակով, եթէ խօսենք ֆուտպոլային հանրամատչելի լեզուով: Կարծես թէ դժուար չէ հասկանալ, որ հենց դրա շուրջ է պէտք ծաւալել քննարկում, ոչ թէ այն բանի, որ բաց սահմանն աւելի լաւ է, քան փակը, կամ սահմանի բացման մասին բանակցելն աւելի լաւ է, քան չբանակցելը:

Իհարկէ, աւելի լաւ է բաց սահմանը, կամ աւելի լաւ է դրա համար բանակցելը, քան չբանակցելը: Բայց ամենալաւ բանակցելուց առաջ մտածելն է, թէ այդ բանակցութիւնն արդեօք չեն կարող քո դէմ օգտագործել եւ դրանից ծուղակ պատրաստել: Իշխանական մոլորակներին խնդիրը պէտք է լինի հենց հասարակութեանը բացատրել, որ օրինակ հայ-թուրքական արձանագրութիւնների մէջ Հայաստանի համար ծուղակ չկայ: Թող այդ մոլորակներն, օրինակ, ապացուցեն, բացատրեն, որ ասենք պատմաբանների ենթայանձնաժողովի գործունէութիւնը որեւէ կապ չի ունենալու ցեղասպանութեան հետ, որ նրանք ուսումնասիրելու են բացառապէս այն պատմական փաստաթղթերն ու փաստերը, որոնք չեն վերաբերում ցեղասպանութեանը: Իշխանական մոլորակները թող դա բացատրեն եթէ կարող են, ոչ թէ ասեն, որ արձանագրութեան մէջ ցեղասպան



նութիւն բառը չկայ, ուրեմն ամէն ինչ լաւ է: Նրանք թող հանրութեանը բացատրեն, թէ ինչու են Հայաստանն ու Թուրքիան յարաբերութիւն հաստատելու մասին արձանագրութիւն կազմում, ու դրա մէջ ներառում են ոչ միայն սեփական սահմանների ճանաչման խնդիրը, այլ նաեւ «այլ պետութիւնների տարածքային ամբողջականութիւնն ու սահմանների անձեռնմխելիութիւնը յարգելու» դրոյթը: Ինչ կապ ունեն հայ-թուրքական յարաբերութիւններում այլ պետութիւնները, եւ արդեօք այդ դրոյթը չի ներառուած հենց Ատրպէյճանին նկատի ունենալով:

Թող իշխանական մոլորակները դա բացատրեն, ոչ թէ ասեն, որ արձանագրութեան մէջ Ղարաբաղ անունը չկայ: Առաւել եւս դիւանագիտութեան մէջ ուղիղ խօսք չի հնչում երբեք, յատկապէս այնպիսի նուրբ հարցերում, ինչպիսին հայ-թուրքական յարաբերութիւնն է: Հետեւաբար քաղաքագէտը պէտք է կարողանայ ոչ միայն տողը կարդալ, այլ առաջին հերթին կարդալ տողատակը, որովհետեւ շարքային քաղաքացին առանց քաղաքագէտի օգնութեան էլ կարող է տող կարդալ: Պէտք է քաղաքացուն դնել անգրագէտի կամ լիմարի տեղ: Քաղաքագէտը պէտք է տողատակի համար:



AGBU GLENDALE-PASADENA CHAPTER
cordially invites you to meet

MICHAEL BOBELIAN
author of the newly published book
Children of Armenia


THURSDAY, SEPTEMBER 24, 2009 - 8:00PM
AGBU ALEX MANOOGIAN CENTER
BOYADJIAN HALL
2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

"In this meticulously researched and moving work, Michael Bobelian reveals why the children of Armenia haven't received justice for the genocide of their ancestors and the unconscionable efforts of Turkish leaders to rewrite their country's history by denying its shameful past. This powerful and gripping account of a people's century-long struggle for justice is long overdue."
GEORGE DEUKMEJIAN
35TH GOVERNOR OF CALIFORNIA

"A powerful and provocative work, Children of Armenia is a poignant and disciplined chronicle of the difficult quest for recognition of the Genocide and the efforts within the Armenian community, the American government, and international community for acknowledgement."
MICHAEL BERENBAUM
FORMER PROJECT DIRECTOR,
UNITED STATES HOLOCAUST MEMORIAL MUSEUM

**Announcing the new
private practice of**

ISSAC HADDAD, M.D.
Pediatrics and Adolescents



**2990 E. Colorado Blvd., Suite 105C
Pasadena, CA 91107
Tel: 626/793-3700
Fax: 626/793-3702**

ՏԵՍԱԿԵՏ

ՏԵՍԱԿԵՏ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ
ՅԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԲԻԱ ՄԱՍԻՆ
(Յապաւուճներով)

ՀԱՄԱՐԻ ԿԱՐԳԱՆՈՒՄԸ

Ազդանշանը տրուած է եւ շոգեկառքը արդէն ճամբայ ելած: Բայց վստահաբար ազդանշանը տուողը Հայրենի իշխանութիւնները չեն, ոչ ալ մեր արեւմտեւքի հարեւանը, որ անտարակոյս, ունի դիւանագիտական հսկայ անցեալ ու փորձառութիւն, մեր ունեցած համեստ կարողութիւններուն դիմաց:

Որքան հայաստանահայ, նոյնքան եւ սփիւռքահայ զանգուածներու համար յստակ է այսօր ու բացորոշ, թէ ազգովին կը գտնուինք կարեւոր, այլ բացառիկ հանգրուանի մը առջեւ, ուր սխալ քայլ մը կրնայ ճակատագրական մեծ անակնկալներու առջեւ դնել մեզ, մեր «Մեծ Երազ»ին կապակցութեամբ, կասկածի տակ առնելով անոր իրականացման մեծ անակնկալներու տակ առնելով անոր իրականացման համար տարուող ամէն ճիգ ու ձեռք բերուած աշխատանք:

Արդարեւ, Հայ եւ Թուրք յարաբերութեանց ծիրին մէջ վերջերս ստորագրուած համաձայնագիրը, որ ամփոփուած է «ճամբու քարտէս» անունը կրող հովանոցի ներքեւ, ակներեւ է որ իր կարգին հովանաւորուած է «մեծամեծներէ» է, իր բովանդակութեամբ, շօշափելիք նիւթերով ու մանրամասնութեամբ, որուն համար նախապէս արտայայտուած էինք, թէ պիտի հոսեցնէր բաւական մեկան, քանի որ հարցը կը վերաբերի մեր ժողովուրդի ճակատագրին ու ապագայ գոյելթին, պահանջելով զգուշութիւն՝ չիցնալու համար լարուած թակարդներու դարձարձիկ ոլորտներուն մէջ:

Վստահաբար, Հայրենի իշխանութիւնները լա՛ւ գիտեն մեր ժողովուրդի անցած գոնէ վերջին հարիւրամեայ ճանապարհի ողիսականը, որ իր պատմական անցուդարձերով եղաւ խիստ ճակատագրական, ուր Քրիստոնեայ Եւրոպայի աչքին առջեւ, օրը ցերեկով կորսնցուցինք արեւելքի ամենահաւատաւոր քրիստոնեայ ազգի, հայ ժողովուրդի մէկուկէս միլիոն զաւակները եւ անշուշտ՝ «Քրիստոնեայ Արեւմտահայաստան»ը նաեւ, որուն համար կը թափենք մեր ամենաթանկագին արցունքները:

Իսկ ապրուած դժբախտութեան ընթացքին, մեր ժողովուրդին եղբերամայրերը հանդիսացան իրենք՝ մեզի համար միշտ առերես ժպտացող, բայց միշտ ալ ցինիկաբար դաւաճանած քրիստոնեայ պետութիւններ՝ Անգլիան, Գերմանիան, Ֆրանսան եւ այսօրուայ աշխարհակալ Միացեալ Նահանգները, որոնցմէ ետ չմնացին մերթ ընդ մերթ ցարական Ռուսաստանը եւ «Ստալինեան Ժամանակը Չանի» ծանօթ Սովետ Միութիւնը:

Ընդունուած երեւոյթ է, թէ «պատմութիւնը կը կրկնէ ինքզինք»: Կասկած կա՞յ, գրեթէ այսօր դարձեալ սկսած է կրկնուիլ երէկի տխուր պատկերը, գուցէ քիչ մը տարբեր, սակայն զարգացած ու լուսաւոր դարու պայմաններու մէջ, ուր անգամ մը եւս «տկար»ը թողլքուած է «գորաւոր»ի կամքին, եւ անտառի ծանօթ օրէնքը կը շարունակուի՝ զարմացնելով շատերը: Արդեօ՞ք ազգովին կը գիտակցինք այս սրտամաշ երեւոյթին ու արթուն ենք դիտելու ու հասկ-

նալու համար ազգամիջեան խաղերը եւ ըստ այնմ դիրքորոշուելու:

Այսօր, յարաբերութիւններ կարգաւորելու մտք կեանքի կոչուելիք համաձայնութիւնը, տարօրինակօրէն ուրախացուցած է Եւրոպական պետութիւնները եւ խորհրդարանները, որոնք մեկնած քաղաքական ու տնտեսական շահերէ, սկսած են շունդալից բերաններով գնահատել համաձայնագրի ոգին, զայն նկատելով դէպի ապագայ առնուած ճիշդ քայլ մը... անշուշտ սրելով իրենց ախորժակները:

Որքան ծիծաղելիք բան կայ այս շնային մօտեցումին ու արդարութիւնը գովերգել փորձող դիրքորոշումին մէջ: Բայց զարմանալու բան կա՞յ. անոնց համար «տակաւ մը» քարիւղն ու նիւթական միջանի «սէնթ»ը աւելի ծանր կը կշռեն, քան թափուող մարդկային արիւնը. երեւոյթ մը, որուն համար քանիցս ճաշակած է հայը՝ իր բոլոր դառնութիւններով:

Փոքրիկ Հայաստանը եւ ազա-

տագրուած Արցախը, պէտք է ճիշդ հասկնալ, թէ հակառակ մեր բոլորից ցանկութեան, այսօր կը գտնուին «մեծեր» ու կամքին ու որոշումներուն ենթակայ վիճակի մէջ, ուր դժբախտաբար տարբերութիւն գրեթէ չկայ երէկուայ «հարիսայ» պատրաստող արեւմտեան խոհարարներու եւ այսօրուայ արեւմտեան պետութիւններու դիւանագիտական որձեւէզ մարզանքներ հիւսող եւ ծրագրող ղեկավարներու միջեւ...:

Այս կացութեան դիմաց, մեզմէ կ'ակնկալուէր անշուշտ երկար մտածել պատմական «թուղթէ շերեփ»ին մասին, որ այլեւս քսանմէկերորդ դարուն, յետ հրամցուած ճաշատեսակներու, փոխարինուեցաւ երկաթեայ փոքրիկ «ղգալով», միայն, բայց պայմանով որ տաք կերակուրի պարագային ըլլանք զգոյշ, ու չայրենք մեր լեզուն... միշտ նկատի ունեցած անցեալի մէջ եւս տեղի ունեցած «սիրաբանութիւնները, համաձայնագիրները, կամ դաշնագիրները», որոնք միշտ ալ վերջացան թրքական յաղթանակով եւ մեր ամօթալի պարտութեամբ կամ անձնատուութեամբ:

Իւրաքանչիւր գիտակից հա-

յու համար, ըլլայ ան հայաստանահայ, արցախահայ կամ սփիւռքահայ, Միջին Արեւելքէ եւ Կովկասներէ ներս տիրող մթնոլորտը եւ պայմանները հարկ է հասկնալ իրենց ամբողջական էութեամբ, քիչ կամ շատ գննողի աչքով դիտելով անշուշտ քաղաքական թէ՛ թատերաբեմը եւ աշխարհագրական գետիններ զբաղեցնող ռազմական կարկիւնի լայն շրջագիծը, որ ներառած է բազմաթիւ երկիրներ, ուր դադար չունին շարունակուող պայքարներն ու պատերազմները, ուր կը խօսի գէնքի մահացու լեզուն, միայն:

Տիրող կացութեանց դիմաց, ունենալէ ետք յստակ պատկերացում քաղաքական հաշիւներու ու քարիւղային ծրագիրներու ընթանալիք ճանապարհներուն մասին եւ մտքերու ու յիշողութիւններու մէջ թարմ պահելով հանդերձ տակաւին վերջերս Կովկասի մէջ սարքուած ռուսական ու վրացական տխուր առճակատումը, գուցէ աւելի ճիշդ պիտի ըլլար օգտագործել առաւել խոհականութիւն, լուրջ մտածողութիւն եւ տրամաբանուած դրսեւորում:

Շաբ.ք էջ 17














1785 E. Washington Blvd.
Pasadena, CA 91104
(626) 794-7026
Open Monday - Saturday
9 am - 8 pm

MISSION
Wine & Spirits

825 W. Glenoaks Blvd.
Glendale, CA 91202
(818) 242-0683
Open Monday - Saturday
9 am - 8 pm

HUGE SELECTION!

EVERY DAY LOW PRICES!

Johnnie Walker Red Label  \$15.99	Johnnie Walker Black Label  \$19.99	Johnnie Walker Green Label  \$37.99	Johnnie Walker Gold Label  \$44.99	Johnnie Walker Blue Label  \$119.99	Grey Goose Vodka  \$21.99	Smirnoff Vodka  \$8.99	Absolut Vodka  \$14.99	Sky Vodka Vodka  \$8.99	Ketel One Vodka  \$16.99
